



Հարաւային Ֆլորիդայի ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Օգոստոս 12, 1985

Գեղաշնորհ

Տ. Թողքոմ Արքեպոս Մանուկեան, Առաջնորդ
Հայց Եկեղեցւոյ Ամերիկայի Աթեւելեան թեմին
Նիւ Եռք.

Սերելի Սրբազն Հայր,

Այսու պարտք կը զգամ կարեւոր տեղեկութիւն մը տալու Զեզի եւ ապա
կարեւոր յիշեցում մը կատարելու:

Երեկ գումարեցինք բացառիկ ծխական ժողով մը 55 անդամներու մաս-
նակցութեամբ եւ մեր նախագահութեամբ ներկայացնելու եւ վաւերացնելու
համար համայնքիս նոր եկեղեցւոյ եւ սրահի շենքերուն յատակադիները:
Ուրախ եմ յայտնելու որ գեղեցկօրէն պատրաստուած ճարտարապետական նախ-
ագիծերը միաձայնութեամբ վաւերացուեցան ժողովին կողմէ: Այս շաբաթ
լման թղթածրաբը կը զըկուի Զեզի եւ թեմական խորհութին առ ի քննութիւն
եւ վաւերացումն: Մեր խնդրանքն է որ շուտով կատարուին անոնք եւ մենք
կարենանք զանոնք ներկայացնել քաղաքապետարանին, եւ նոյնամբ սկսինք
շինութեանց: Վստահ եմ պիտի ուրախանաք լսելով այսքանը, այսքան շուտ:

Թիշեցնելիքս ալ կարեւոր կը նկատեմ: Ամիսներ առաջ էի Զեր
Սրբազնութեան որ Զեր միջնորդութեամբ Մինաս Մալումեան արժանի դառնայ
Հայրապետական բարձր գնահատութեան, որ հնութեան սրբատառ կոնդակով մը:
Այս ոչ միայն անհունօրէն պիտի հրճուեցնէ Մինասն ու Արշալոյսը, որոնք
երախտարապւ պիտի մնան վեհափառ Հայրաբատին ու Զեզի, այլ նաեւ սքանչելի
առիթ պիտի հանդիսանայ մեզի համար աղահովելու Մալումեաններէն բացառիկ
նուիրատուութիւն մը նորակառոյց մեր եկեղեցւոյ շինութեան ի նպաստ:
Վստահ եմ որ գնահատուելով Սրբազնագոյն Հայրապետէն, անոնք իսկոյն պիտի
տան առատութիւն եւ խանդակառ կերպով մեր համայնքի նորակառոյց Ս. Եկեղեցի-
ն: Այս կարեւոր պարագան խնդրեմ մտահատ չընէք եւ ընթացք տաք անոր,
վստահ ըլլալով որ Մինաս թէ արժանի է եւ թէ իր բարի տրամադրութեանցը
որպէս արդիւնք համայնքս պիտի գտուի իր բարեպաշտ ներկայութենէն, նիւթ-
ապէս եւ բարոյապէս:

Բարի հանապարհ, Սերելի Սրբազն:

Սերով, աղօթակից,
Հայոց Առաքելական Եկեղեց
Հովհաննես Հովհաննես

ARMENIAN CHURCH OF SOUTH FLORIDA

P.O. BOX "O", POMPANO BEACH, FLORIDA 33061 — (305) 392-7815